ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«____» ______________ 20 թ.

No __________________

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Ի պատասխան ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյանի կողմից ՀՀ կառավարությանն ուղղված Ձեր 1/3461-2020 գրությամբ ներկայացված հարցի՝ տրամադրում եմ ՀՀ ՊԵԿ-ի տեղեկատվական բազայում առկա 2019 թվականի ընթացքում «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծված գրությունում նշված ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրաքների վերաբերյալ տեղեկատվությունը (կցվում է):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ըստ առկա ՀՀՊԵԿ-ի տեղեկատվական բազայի տվյալների 2019 թվականի ընթացքում «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով գրությունում նշված ԱՏԳ ԱԱ 0204, 1002, 1004 և 1105 ծածկագրերին դասվող ապրաքներ ՀՀ չեն ներմուծվել:

Առդիր՝ 1 էլ.ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Կատարող՝
Նաիրա Նիկողոսյան
մաքսային վիճակագրության և
տեղեկատվության բաժին

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

☎ (011)801-088

Տեղեկատվություն

2019թ. ընթացքում «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծված որոշ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների վերաբերյալ

| ԱՏԳ ԱԱ ծածկագիր | Չ/Մ | Քանակ | Մաքսային արժեք (մլն.դրամ) |
|---|---|---|---|
| 0201 | տոննա | 4.3 | 31.0 |
| 0202 | տոննա | 5020.6 | 6614.3 |
| 0203 | տոննա | 7883.2 | 6927.0 |
| 0207 | տոննա | 38322.5 | 18648.7 |
| 0208 | տոննա | 0.1 | 0.9 |
| 0209 | տոննա | 2457.7 | 1494.4 |
| 0301 | տոննա | 0.2 | 5.0 |
| 0302 | տոննա | 23.5 | 135.3 |
| 0303 | տոննա | 903.9 | 1359.9 |
| 0304 | տոննա | 6.7 | 26.7 |
| 0305 | տոննա | 15.5 | 14.2 |
| 0306 | տոննա | 16.1 | 71.9 |
| 0401 | տոննա | 552.4 | 327.8 |
| 0402 | տոննա | 3251.7 | 3473.2 |
| 0403 | տոննա | 266.6 | 385.2 |
| 0405 | տոննա | 3487.3 | 8423.1 |
| 0406 | տոննա | 815.9 | 2156.6 |
| 0407 | հազ.հատ | 172.4 | 45.1 |
| 0701 | տոննա | 1981.4 | 677.5 |
| 0702 | տոննա | 3769.9 | 1142.7 |
| 0703 | տոննա | 2155.5 | 431.9 |
| 0704 | տոննա | 2732.1 | 331.9 |
| 0706 | տոննա | 2765.5 | 399.2 |
| 0709 | տոննա | 2896.8 | 1640.0 |
| 0710 | տոննա | 13.2 | 11.2 |
| 0711 | տոննա | 1311.8 | 411.6 |
| 0712 | տոննա | 36.3 | 57.2 |
| 0713 | տոննա | 820.2 | 356.5 |
| 0803 | տոննա | 21114.5 | 7309.9 |
| 0804 | տոննա | 2540.3 | 1461.2 |
| 0805 | տոննա | 31826.3 | 8782.0 |
| 0806 | տոննա | 3868.1 | 1618.7 |
| 0807 | տոննա | 2248.6 | 788.9 |
| 0809 | տոննա | 3473.9 | 1094.8 |
| 0810 | տոննա | 14921.6 | 4385.8 |
| 0901 | տոննա | 12250.0 | 11092.2 |
| 0902 | տոննա | 182.2 | 466.1 |
| 1001 | տոննա | 30916.7 | 3348.4 |
| 1003 | տոննա | 2191.8 | 255.0 |
| 1005 | տոննա | 18775.7 | 1870.4 |
| 1006 | տոննա | 8808.5 | 2571.4 |
| 1101 | տոննա | 94.4 | 43.5 |
| 1102 | տոննա | 0.9 | 0.8 |
| 1103 | տոննա | 24.3 | 12.6 |
| 1104 | տոննա | 496.4 | 158.0 |
| 1106 | տոննա | 4.3 | 10.3 |
| 1107 | տոննա | 260.5 | 109.5 |
| 1509 | տոննա | 111.1 | 256.0 |
| 1511 | տոննա | 550.7 | 280.3 |
| 1512 | տոննա | 728.8 | 326.5 |
| 1517 | տոննա | 4914.6 | 4023.2 |

| | | | |
|---|---|---|---|
| 1704 | տոննա | 2497.2 | 2394.8 |
| 1806 | տոննա | 3572.8 | 6302.9 |
| 1905 | տոննա | 2536.6 | 3246.0 |
| 2006 | տոննա | 1.3 | 6.0 |
| 2007 | տոննա | 120.2 | 66.3 |
| 2106 | տոննա | 1371.3 | 3282.9 |
| 2106 | հզ. լ 100% սպ. | 0.3 | 17.8 |
| 2202 | հզ.լիտր | 11415.6 | 4022.0 |
| 2208 | հզ. լ 100% սպ. | 8378.8 | 15643.0 |
| 3003 | տոննա | 0.4 | 5.3 |
| 3004 | տոննա | 1191.9 | 80235.9 |
| 3005 | տոննա | 83.1 | 355.1 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐ**

N 01/11.1/2801-2020

«........»..........2020թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**
**ՊՐՆ Մ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Մելքումյան**

Ի պատասխան ՀՀ փոխվարչապետ Մ. Գրիգորյանին ուղղված Ձեր՝ 2020 թվականի մայիսի 6-ի գրության՝ լրագրող Ս. Ղազարյանի կողմից ներկայացված հարցման վերաբերյալ հայտնում եմ, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մշակվել և անդամ-պետությունների քննարկմանն է ներկայացվել «ԵԱՏՄ անդամ-պետությունների տարածքում միջազգային ռոումինգում բջջային կապի ծառայությունների արդարացի սակագների սահմանման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցառումների պլանի մասին» նախագիծը, որը սահմանված կարգով քննարկվել է ՀՀ շահագրգիռ մարմինների և ՀՀ տարածքում էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համատեղ:

Ներկա դրությամբ ամբողջ աշխարհում հաստատված կորոնավիրուսի պանդեմիայի պատճառով վերը նշված նախագծի լրամշակման աշխատանքները հետաձգվել են և ԵԱՏՄ տարածքում ռոումինգ ծառայությունների սակագների նվազեցման/չեղարկման ժամկետների հարցը դեռևս քննարկման փուլում է:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 5/20/2020 14:22:58 GMT+4

Signed by: ARSHAKYAN HAKOB 2604850273

**Հարգանքով՝**

**Հ. ԱՐՇԱԿՅԱՆ**

Կապի և փոստի
վարչության կապի բաժին
Հեռ.՝ 010 590063

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«____» ______________ 20 թ.
No ____________________

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Ի պատասխան ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյանի կողմից ՀՀ կառավարությանն ուղղված Ձեր 1/3254-2020 գրությամբ ներկայացված հարցի՝ տրամադրում եմ ՀՀ ՊԵԿ-ի տեղեկատվական բազայում առկա 2019 թվականի ընթացքում «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծված գրությունում նշված ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների համար 2019 թվականին գանձված ԱԱՀ-ի գումարի վերաբերյալ տեղեկատվությունը (կցվում է):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ըստ առկա ՀՀՊԵԿ-ի տեղեկատվական բազայի տվյալների 2019 թվականի ընթացքում «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով գրությունում նշված ԱՏԳ ԱԱ 0204, 1002, 1004 և 1105 ծածկագրերին դասվող ապրանքներ ՀՀ չեն ներմուծվել:

Առդիր՝ 1 էլ.ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Կատարող՝
Նաիրա Նիկողոսյան
մաքսային վիճակագրության և
տեղեկատվության բաժին
☎ (011)801-088

Տեղեկատվություն

2019թ. ընթացքում «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծված որոշ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների համար 2019 թվականին գանձված ԱԱՀ-ի գումարի վերաբերյալ

| ԱՏԳ ԱԱ ծածկագիր | ԱԱՀ (մլն.դրամ) |
|---|---|
| 0201 | 7.1 |
| 0202 | 1449.9 |
| 0203 | 1523.9 |
| 0207 | 4207.8 |
| 0208 | 0.2 |
| 0209 | 340.7 |
| 0301 | 1.1 |
| 0302 | 28.0 |
| 0303 | 283.0 |
| 0304 | 5.7 |
| 0305 | 3.0 |
| 0306 | 15.0 |
| 0401 | 73.2 |
| 0402 | 704.7 |
| 0403 | 86.3 |
| 0405 | 1841.3 |
| 0406 | 493.5 |
| 0407 | 9.0 |
| 0701 | 18.2 |
| 0702 | 256.1 |
| 0703 | 94.5 |
| 0704 | 74.3 |
| 0706 | 89.3 |
| 0709 | 352.6 |
| 0710 | 2.5 |
| 0711 | 84.2 |
| 0712 | 12.6 |
| 0713 | 75.4 |
| 0803 | 1520.5 |
| 0804 | 302.6 |
| 0805 | 1839.6 |
| 0806 | 335.8 |
| 0807 | 165.0 |
| 0809 | 220.9 |
| 0810 | 907.0 |
| 0901 | 2225.2 |
| 0902 | 103.8 |
| 1001 | 680.9 |
| 1003 | 50.9 |
| 1005 | 365.3 |
| 1006 | 529.8 |
| 1101 | 9.2 |
| 1102 | 0.2 |
| 1103 | 2.8 |
| 1104 | 34.7 |
| 1106 | 2.3 |
| 1107 | 22.8 |
| 1509 | 53.8 |
| 1511 | 57.6 |
| 1512 | 66.9 |
| 1517 | 856.0 |

| | |
|---|---|
| 1704 | 505.7 |
| 1806 | 1258.3 |
| 1905 | 676.7 |
| 2006 | 1.3 |
| 2007 | 14.4 |
| 2106 | 724.8 |
| 2202 | 825.2 |
| 2208 | 2646.9 |
| 3003 | 1.1 |
| 3004 | 8402.4 |
| 3005 | 71.4 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 010-594015
Էլ. փոստ info@moj.am

№ ___________

«   » ______________20   թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Ի պատասխան ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյանի կողմից ՀՀ կառավարությունից պահանջվող տեղեկատվությանը, առ այն՝ թե 2019թ.-ի ընթացքում քանի կազմակերպություն է սնանկ ճանաչվել և թե որքան է կազմել հարուցված սնանկության վարույթների միջին տևողությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը չի տիրապետում, նման վիճակագրություն չի վարում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանների գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը և հանրության առջև հաշվետվողականությունն ապահովելու նպատակով Դատական դեպարտամենտը հավաքում և վարում է դատական վիճակագրություն, հետևաբար նշված տեղեկատվությունը կարող է տրամադրվել Դատական դեպարտամենտի կողմից:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե 2019թ.-ի ընթացում քանի սնանկության վարույթ է հարուցվել 1-ից 3 միլիոն ՀՀ դրամ, 3-ից 5 միլիոն ՀՀ դրամ և 5-ից 10 միլիոն ՀՀ դրամ գումարի պահանջներով, հարկ է նշել, որ **«Սնանկության մասին» օրենքի** 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում

են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

Վերոգրյալից հետևում է, որ սնանկության վարույթը հարուցելուց հետո կարող են հայտնվել այլ պարտատերեր, որոնց ներկայացրած պահանջների արդյունքում պարտապանից պահանջվող գումարի չափը ավելանա, հետևաբար սնանկության վարույթի հարուցման համար հիմք հանդիսաժ պահանջի չափը չի կարող դիտվել վերջնական և հստակ տեղեկատվություն:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ նշված տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն սնանկության գործերը վարող մասնագիտացված դատարանի՝ ՀՀ սնանկության դատարանի կամ դատական վիճակագրությունը հավաքող և վարող մարմնի՝ Դատական դեպարտամենտի կողմից: Ուստի առաջարկում ենք դիմել Դատական դեպարտամենտ՝ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

Recoverable Signature



Suren Galstyan

Signed by: GALSTYAN SUREN 1111911555

**ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ**

Կատարող՝ ՀՀ ԱՆ վերահսկողական ծառայություն
Հեռ. (010) 59-41-53

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«____» ____________ 20 թ.

No __________________

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ՊԱՐՈՆ ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ

Ի կատարումն ՀՀ վարչապետի 06.05.2020թ.-ի
№ 02/05.4/21846-2020 հանձնարարականի

Հարգելի պարոն Մելքումյան

Սույն թվականի մայիսի 5-ին ՀՀ կառավարություն ուղղված հարցի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ հարկ վճարողների կողմից 2019 թվականի համար հարկային մարմին ներկայացված «Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկ»-ներով արտացոլված ցուցանիշների համաձայն՝

1) տնտեսվարող սուբյեկտների կողմից ֆիզիկական անձանց օգնության, սննդի կազմակերպման, նրանց համար սոցիալ-մշակութային միջոցառումների կազմակերպման և համանման այլ ծախսերի մասով հայտարարագրվել է ծախս՝ 3.524.722.940 դրամի չափով,

2) տնտեսվարող սուբյեկտներից թվով 28-ը գերազանցել են ՀՀ հարկային օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ հարկային տարվա համախառն եկամտի 0.25 տոկոսը կազմող մեծությունը: Նշված տնտեսվարողների մասով հարկային մարմինը իրեն վերապահված լիազորությունների սահմաններում իրականացնում է համապատասխան վարչարարություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ հարկային տեղեկատվության և ռիսկերի
վերլուծության վարչություն
Հեռ+374 11 54 40 39

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

*0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594-004*
*էլ. փոստ info@moj.am*

N _______________

«____» __________ 2020թ.

**ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**
**ՊԱՐՈՆ ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Մելքումյան

Ի պատասխան ՀՀ վարչապետին ուղղված Ձեր գրությանը՝ հայտնում եմ Ձեզ, որ «Նոտարիատի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ արդարադատության նախարարը նոտարի պաշտոնում կարող է նշանակել նաև նոտարական գործունեության ստաժավորում չանցած և որակավորման քննություն չհանձնած այն անձին, որը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում կամ նոտարական պալատում իրականացրել է նոտարիատի բնագավառում վերջին հինգ տարվա ընթացքում մասնագիտական ոչ պակաս, քան երեք տարվա աշխատանքային գործունեություն:

Սույն հոդվածում վկայակոչված ՀՀ արդարադատության նախարարության համակարգում նոտարիատի բնագավառ համարվող ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողական ծառայությունը, հետևյալ հիմնավորմամբ.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 1384-Ն որոշման հավելված N 1-ի 2-րդ մասի 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վերահսկողական ծառայության նպատակները և խնդիրներն են նախարարությանը վերապահված իրավասության սահմաններում՝ նախարարության առանձնացված

ստորաբաժանումների, նոտարական և քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

Սույն հավելվածի 3-րդ մասի 7-րդ կետի 2-րդ, 3-րդ և 10-րդ ենթակետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վերահսկողական ծառայությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝ «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով ուսումնասիրում և ամփոփում է նոտարների գործունեությունը, վերահսկողության արդյունքներով նախարարին ներկայացնում է առաջարկություններ նոտարի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, իրականացնում է «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված վերահսկողություն՝ նոտարական պալատի կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և նոտարական պալատի կանոնադրական պահանջների պահպանման նկատմամբ, քննարկում և վերլուծում է նոտարների վերաբերյալ ներկայացված դիմումները և բողոքները:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ «Նոտարիատի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ սահմանված նոտարի պաշտոնում նշանակման կարգի համաձայն՝ նոտարի պաշտոնում կարող են նշանակվել այն անձինք, որոնց պաշտոնի անձնագրերում հստակ նախատեսված են ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողական ծառայության վերը նշված գործառույթների իրականացումը:

Ինչ վերաբերում է ըստ նոտարական տարածքի և բնակչության թվի նոտարների հաստիքների սահմանված լինելուն՝ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2018 թվականի մարտի 21-ի թիվ 114-Ա հրամանի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում նոտարների հաստիքների քանակը սահմանվել է 122 հաստիքային միավոր, իսկ նույն հրամանի թիվ 1 և թիվ 2 հավելվածներով հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում նոտարական տարածքների համապատասխան նստավայրերում նոտարների հաստիքային միավորները և անվանական հաստիքային ցուցակը, իսկ Հայաստանի Հանրապետությունում գործող նոտարների թիվը կազմում է 112:

Հայաստանի Հանրապետությունում նոտարական գործունեության նկատմամբ առկա պահանջարկի բավարարման վերաբերյալ գնահատական տալու համար նախ հարկ ենք համարում փաստել, որ ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հունվարի 22-ի թիվ 9-Ն հրամանի հավելված թիվ 1-ի 4-րդ կետով սահմանվում է, որ նոտարական գրասենյակի գտնվելու վայրը որոշվում է քաղաքացիների հարմարավետության, հերթերի արդյունավետ կառավարման, անվտանգության ապահովման, ժամանակի արդյունավետության սկզբունքների հիման վրա՝ սպառողների համար նոտարական գրասենյակների հասանելիության (ճանապարհներին հնարավորինս մոտ տեղակայումը, գրասենյակ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներով հասնելու հնարավորությունը), նոտարի գործունեության տնտեսական նպատակահարմարության չափանիշներով:

«Նոտարիատի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ նոտարական գործողություններ կատարելու համար նոտարին կարող է դիմել ցանկացած անձ, անկախ նրա բնակության կամ գտնվելու վայրից, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

Այսինքն, նոտարական գրասենյակի գտնվելու վայրը որոշելիս հաշվի է առնվում նաև քաղաքացիների հարմարավետությունը, ներառյալ գրասենյակ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներով հասնելու հնարավորությունը:

Բացի այդ, քաղաքացու համար հնարավորություն է ընձեռնված նոտարական գործողություններ կատարելու համար դիմել նոտարին անկախ դիմողի բնակության կամ գտնվելու վայրից:

Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ վերոգրյալի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն քաղաքացիներից համապատասխան դիմումներ, բողոքներ և առաջարկություններ չեն ստացվել:

Ինչ վերաբերում է անսահմանափակ թվով նոտարական լիցենզիաներ տրամադրելուն, ապա պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում անսահմանափակ թվով նոտարական լիցենզիաներ տրամադրվել չեն կարող, քանի որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2018 թվականի մարտի 21-ի թիվ 114-Ա հրամանով Հայաստանի Հանրապետությունում նոտարների հաստիքների քանակը սահմանված է 122 հաստիքային միավոր: Հետևաբար,

հաստիքային միավորի փոփոխություն կարող է իրականացվել բացառապես համապատասխան հիմնավորումների և անհրաժեշտությունից ելնելով:

Անդրադառնալով էլեկտրոնային նոտարական ծառայությունների մատուցմանը՝ անհրաժեշտ է նշել, որ այս պահին ընթանում են գործընթացներ նշված համակարգի ներդրման ուղղությամբ, սակայն դեռևս Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային կարգով նոտարական ծառայություններ չեն մատուցվում:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

Recoverable Signature

X

Rustam Badasyan

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

**ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ**

Կատարող՝ ՀՀ ԱՆ վերահսկողական ծառայություն
Հեռ. (010) 59-41-53

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐ**

« » 2020 թ. N

**Ձեր 17.04.2020 թ. 02/05.5/16950-2020**

**ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**
**ՊԱՐՈՆ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Աղաջանյան,**

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյանի կողմից ՀՀ կառավարությանն ուղղված հարցի պատասխանի նախագիծը:

Առդիր՝ 4 էջ:

Recoverable Signature

X

ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆ

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** Signed by: BATOYAN ZARUHI 7909790279 **Զ. ԲԱԹՈՅԱՆ**

**Կատ.՝ սոցիալական աջակցության վարչություն**
**Հեռ.՝ 055560252**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ՊԱՐՈՆ Մ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մելքումյան,

Սոցիալական պաշտպանության ոլորտում առաջին, երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց, երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, միայնակ մայրերին, ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքներին, ծերության նպաստ ստանալու իրավունք ունեցող անձանց (այսուհետ՝ շահառու) և այլ սոցիալապես խոցելի խմբերի համար սոցիալական աջակցության ծրագրերը ծրագրային բյուջետավորման ձևաչափով մշակվում և ներկայացվում են հաստատման՝ ՀՀ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով:

Ձեր կողմից բարձրացված հարցերի կապակցությամբ հայտնում եմ.

1. Շահառուների եկամուտների աղբյուրների, այդ թվում՝ եկամտի այլ աղբյուր ունենալու կամ չունենալու մասին տեղեկատվությունը տրամադրել հնարավոր չէ, քանի որ համընդհանուր եկամուտների հայտարարագրման համակարգ դեռևս ներդրված չէ:

2. Շահառուների յուրաքանչյուր խմբի համար սոցիալական աջակցության տարբեր ծրագրերով նախատեսվող գումարները.

1) «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով

ա. հաշվարկված հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակին տրվում է հավելում՝ առաջին խմբի համար՝ աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի 40 տոկոսի չափով, իսկ երկրորդ խմբի համար՝ 20 տոկոսի չափով:

բ. երկու ծնողին կորցրած մինչև 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկվում է հետևյալ կերպ. հիմնական կենսաթոշակի չափի հնգապատիկին (90000 դրամ)

գումարվում է մահացած յուրաքանչյուր ծնողի հաշվարկված (ենթադրյալ) կենսաթոշակի աշխատանքային մասի 50 տոկոսը: Հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ ստացող անձանց տրվող կենսաթոշակների չափերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրվել չի կարող, քանի որ յուրաքանչյուր անձի դեպքում կենսաթոշակի չափը հաշվարկվում է անհատապես և կախված է նրա կամ կորցրած կերակրողի աշխատանքային ստաժիտևողությունից: Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի միջին չափը 21.04.2020 թ. դրությամբ կազմել է 41328 դրամ, իսկ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի միջին չափը (այդ թվում՝ 1 ծնողին կորցրած երեխային վճարվող)՝ 32035 դրամ:

2) ՀՀ կառավարության 2013 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1489-Ն որոշմամբ հաշմանդամության նպաստի չափերը, այդ թվում՝ առաջին և երկրորդ խմբի հաշմանդամների համար կազմում են 26500 դրամ, իսկ երկու ծնողին կորցրած՝ 18 տարին չլրացած երեխայի (կամ առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակի) դեպքում նպաստի չափը՝ 90000 դրամ:

3) առաջին և երկրորդ խումբ հաշմնադամություն ունեցող անձինք

ա. ընդգրկված են ՀՀ կառավարության 04.03.2004 թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N318-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում և կարող են օգտվել սահմանված՝ անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու արտոնություններից,

բ. ընդգրկված են ՀՀ կառավարության 30.05.2019 թ. N642-Ն որոշմամբ հաստատված անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկում, օգտվում են անվճար դեղեր ձեռք բերելու արտոնությունից,

գ. ունեն անվճար էլեկտրատրանսպորտից օգտվելու իրավունք,

դ. հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական անհատական ծրագրի (ՎԱԾ) հիման վրա աջակցող միջոցներ (պրոթեզներ, օրթեզներ, հենակներ, սայլակներ, քայլակներ, լսողական սարքեր, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ և այլն)

ստանալու իրավունք՝ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման.

4) միայնակ մայրերը չեն դիտարկվում որպես առանձին սոցիալական խումբ, նրանց համար առանձին ծրագիր չի մշակվում, սակայն միայնակ մոր երեխան, որպես սոցիալապես խոցելի խումբ ներառված է ընտանիքների անապահովության գնահատման կարգում: Միայնակ մայրերը՝ իրենց երեխաներով, սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկվում են իրենց ընտանիքի անապահովության միավորին համապատասխան:

5) ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստի (ընտանեկան նպաստ՝ երեխա ունեցող ընտանիք, սոցիալական նպաստ՝ երեխա չունեցող ընտանիք և հրատապ օգնություն) չափը որոշվում է ՀՀ կառավարության 24.01.2019 թ. N50-Ն որոշմամբ (աղյուսակը կցվում է): Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստի իրավունք ունեցող ընտանիքի միջին ամսական նպաստի չափը կազմում է 31300 դրամ:

3. ՀՀ կառավարության կողմից մշակված և իրականացվող՝ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերում նշված անձանց վերաբերյալ վիճակագրություն չի վարվում, ըստ այդմ այդ տեղեկատվությունը տրամադրվել հնարավոր չէ, բացառությամբ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 13-րդ ծրագրի, որն ուղղված է ընտանեկան և սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքներին: Աջակցությունը տրամադրվում է յուրաքանչյուր ընտանիքին իր նպաստի չափի 50% -ի չափով, որի 70%-ը ընտանիքին տրամադրվում է կանխիկ վճարման ձևով՝ ապրիլ ամսվա նպաստի վճարման հետ միասին, 30%-ը փոխանցվում է որպես բաժանորդի կողմից սպառվող էլեկտրական էներգիայի դիմաց վճար: Աջակցություն ստացող ընտանիքների թվաքանակը կազմում է շուրջ 86 հազար ընտանիք, իսկ տրամադրված դրամական միջոցները՝ շուրջ 1.22 մլրդ դրամ:

| | | | 2019 թ. | 2020 թ. |
|---|---|---|---|---|
| Սահմանային միավոր | | | 30.00 | 28.00 |
| Ընտանեկան նպաստի բազային մաս (դրամ) | | | 18000 | 18000 |
| Սոցիալական նպաստ | | | 18000 | 18000 |
| Յուրաքանչյուր մինչև 18 տարեկան անդամին տրվող հավելում | Տարբերակում | | | |
| | 28.01-35.00 | | 5500 | 5500 |
| | | 4 և ավելի երեխաների դեպքում (բազմազավակ ընտանիք) | 6500 | 6500 |
| | | բ/լ և ս/մ բնակավայրերում | 6000 | 6000 |
| | | բ/լ և ս/մ բնակավայրերում և բազմազավակ ընտանիք | 7000 | 7000 |
| | 35.01-39.00 | | 6000 | 6000 |
| | | բազմազավակ ընտանիք | 7000 | 7000 |
| | | բ/լ և ս/մ բնակավայրերում | 6500 | 6500 |
| | | բ/լ և ս/մ բնակավայրերում բազմազավակ ընտանիք | 7500 | 7500 |
| | 39.01 և ավելի | | 6500 | 6500 |
| | | բազմազավակ ընտանիք | 7500 | 7500 |
| | | բ/լ և ս/մ բնակավայրերում | 7000 | 7000 |
| | | բ/լ և ս/մ բնակավայրերում բազմազավակ ընտանիք | 8000 | 8000 |
| Եռամսյակային հրատապ օգնություն | | | 18000 | 18000 |
| միանվագ դրամական օգնություն, այդ թվում՝ | | | | |
| երեխայի ծննդյան | | | 50000 | 50000 |
| առաջին դասարան ընդունվելու | | | 25000 | 25000 |
| ընտանիքի անդամի մահվան կապակցությամբ | | | 50000 | 50000 |

**Հարգելի՛ պարոն Սարգսյան ,**

Ձեզ եմ վերահասցեավորում Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղի բնակիչ Սիմոն Վոլոդիայի Մուրադյանի խնդիրը: Կից ներկայացնում եմ դիմում-նամակը, ինչպես նաև ներկայացնում եմ Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի ոռոգման ցանցի մասին ինձ ուղղված դիմումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“.......” ........................ 2020թ. N.................................

Ազգային ժողովի պատգամավոր
Նարեկ Մկրտչյանին

*Ի կատարումն վարչապետի 05.06.2020թ.*
*N 02/05.7/23951-2020 հանձնարարականի*

Հարգելի պարոն Մկրտչյան

Վարչապետին ուղղված Ձեր գրությունը՝ Սիմոն Մուրադյանի աշխատավարձի խնդրի վերաբերյալ, վերահասցեագրվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, և այն քննարկվել է Ջրային կոմիտեի հետ:

Սիմոն Մուրադյանի աշխատավարձի պարտքի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ ըստ «Էջմիածին» ՋՕԸ-ի ներկայացրած տեղեկատվության՝ 2016 թվականի նոյեմբերի 30-ին ՀՀ Արմավիրի մարզի բոլոր ՋՕԸ-ները, այդ թվում «Խոյ» ՋՕԸ-ն, որտեղ աշխատել է դիմումատուն՝ որպես Ակնալիճ տարածքային տեղամասի ավագ ջրբաշխ, միավորվել և հանդես են եկել «Արմավիր» ՋՕԸ-ի կազմում: Միացման արդյունքում ՋՕԸ-ների իրավահաջորդ է ճանաչվել «Արմավիր» ՋՕԸ-ն:

2018 թվականի մարտի 5-ին «Արմավիր» ՋՕԸ-ն բաժանվել է «Արմավիր» և «Էջմիածին» ՋՕԸ-ների և բաժանիչ հաշվեկշռով «Արմավիր» ՋՕԸ-ից Սիմոն Վլադիմիր Մուրադյան աշխատակցի անունով «Էջմիածին» ՋՕԸ-ին պարտք է փոխանցվել 1183763 ՀՀ դրամ գումարի պարտավորություն, որն ամբողջությամբ մարվել է:

Տեղեկացնում ենք նաև, որ 2016 թվականին տեղացած կարկուտի հետևանքով Ակնալիճ համայնքի ջրօգտագործողների վնասի փոխհատուցման գումարը կազմել է 22181744 ՀՀ դրամ, որը ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ Արմավիրի

մարզպետարանի կողմից փոխանցվել է «Խոյ» ՋՕԸ-ին, որն էլ իր հերթին նվազեցրել է ջրօգտագործողների մասով առաջացած պարտքի գումարներն՝ ըստ հաստատված ցուցակների:

ՀՀ կառավարության որոշմամբ պետության կողմից փոխհատուցված գումարը դիմողը համարել է գանձում և ըստ աշխատանքային պայմանագրի՝ պահանջել է հաշվարկել աշխատավարձ՝ այդ գումարի 23%-ի չափով: Սակայն ՀՀ Արմավիրի մարզի ՋՕԸ-ները, փոխհատուցված միանվագ գումարը չհամարելով հավաքագրում, հաշվարկ չեն կատարել:

«Արմավիր» ՋՕԸ-ի Վարչական խորհուրդը 2017 թվականի հոկտեմբերի 26-ի նիստի N 4 արձանագրությամբ «Արմավիր» ՋՕԸ-ին հանձնարարել է կարկուտից տուժած համայնքների ավագ ջրբաշխներին հաշվարկել լրացուցիչ վարձատրություն և կազմել նրանց հետ փոխադարձ համաձայնագիր, որտեղ նշվել է վճարվելիք գումարի չափը, որն ամբողջությամբ վճարվել է (26.10.2017թ. կայացած «Արմավիր» ՋՕԸ-ի վարչական խորհրդի նիստի N 4 արձանագրությունը, ինպես նաև «Արմավիր» ՋՕԸ-ի և Սիմոն Մուրադյանի միջև կնքված փոխադարձ համաձայնագիրը կցվում է): Միաժամանակ տեղեկացնում ենք, որ աշխատանքային վեճերը ենթակա են քննության դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից բարձրացված ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցի խնդրին, տեղեկացնում ենք, որ այն գտնվում է համայնքի հաշվեկշռում և անհատույց օգտագործման ու շահագործման է հանձնված ջրօգտագործողների ընկերությանը: ՋՕԸ-ն կարողանում է իրականացնել պահպանման և մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Recoverable Signature

X

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Ս. Պապիկյան

*Կատարող՝ Ա. Խուդոյան*
*Տարածքային կառավարման վարչություն*
*Հեռ.(011) 52-37-34*

# Փոխադարձ համաձայնագիր

07.11.2017թ.

Արմավիր ՋՕԸ-ի տնօրենի ժ/պ Ա. Մկրտչյանը մի կողմից, Արմավիր ՋՕԸ-ի աշխատակից Սիմոն Մուրադյանը մյուս կողմից, կազմեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Կողմերը փոխադարձ համաձայն են վճարել (Արմավիր ՋՕԸ) և ստանալ (աշխատակից) որպես 2016թ. տեղացած կարկտից ստացված փոխհատուցումից լրավճարի 1894384 ( մեկ միլիոն ութ հարյուր իննսունչորս հազար երեք հարյուր ութսունչորս ) ՀՀ դրամ, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային պարտավորությունները մնում են ընկերության վրա, որի համար ստորագրում ենք:

Արմավիր ՋՕԸ-ի տնօրենի ժ/պ Ա. Մկրտչյան ____________

Աշխատակից Ս. Մուրադյան ____________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4

Արմավիր ջրօգտագործողների ընկերության վարչական խորհրդի նիստի

26.10.2017թ Արմավիր ջրօգտագործողների ընկերության գրասենյակում(Հ.Հ. ք.Էջմիածին Ջվարթնոց ավան) տեղի ունեցավ Արմավիր ջրօգտագործողների ընկերության վարչական խորհրդի նիստ,որին մասնակցում էին վարչական խորհրդի բոլոր անդամները

Նախագահող՝

Ընկերության վարչական խորհրդի նախագահ՝ Ս.Ասատրյան

Քարտուղարությամբ՝

Ընկերության վարչական խորհրդի քարտուղար՝ Մ.Կոստանյան

ՕՐԱԿԱՐԳ

1.2016թ <Խոյ>,<Վաղարշապատ>,<Մերձափնյա>ՋՕԸ-երի կողմից սպասարկվող ա.Դողս,Ամբերդ,Աղավնատուն,Ֆերիկ,Հայթաղ,Ծաղկալանջ,Ակնալիճ,Արագած,Լեռնամերձ,Շահումյան,Դաշտ,Այգեշատ,ՆորԱրտագերս,Տանձուտ,Եղեգնուտ,Արմավիր,Գետաշեն,Փշատավան,Մրգաշատ,Նալբանդյան,Արազափ,Այգեշատ,Արևիկ,Արգավանդ համայնքների ջրօտագործողների ոռոգման հողերում տեղացած կարկուտի

բ.Տեղացած կարկուտի հետևանքով ՀՀ Կառավարության կողմից վերը նշված ՋՕԸ-երի ջրօտագործողներին վնասի փոխհատուցման և դրանից ավագ ջրբաշխներին լրացուցիչ վարձատրություն հաշվարկելու վերաբերյալ:

Նախագահը բացելով վարչական խորհրդի նիստը հայտնեց,որ 2016թ տեղացած կարկտի հետևանքով <Խոյ>,<Վաղարշապատ>,<Մերձափնյա>ՋՕԸ-երին ՀՀ Կառավարության կողմից տրվել է 235.0մլն.դրամ,որպես վերը նշված համայնքներում ջրօգտագործողների կողմից կրած վնասի փոխահատուցում,որը միաժամանակ համարվում է ջրօգտագործողների կողմից օտագործած ոռոգման ջրի վճարում:

Վերը նշված համայնքներում աշխատող ավագ ջրբաշխները բանավոր գանգատարկումներով դիմել են <Արմավիր> ՋՕԸ-ի վարչական խորհրդին, որը համարվում է վերը նշված ՋՕԸ-երի իրավահաջորդ ,(ՀՀ Ջրօգտագործողների Ընկերությունների և Ջրօգտագործողների Ընկերությունների Միությունների Գործունեությունը Կանոնակարգող Խորհրդի 17-ը նոյեմբերի 2016թ-ի N003 որոշում) որ <Խոյ>,<Վաղարշապատ>և <Մերձափնյա>ՋՕԸ-երը ստացված 235մլն.դրամից իրենց լրացուցիչ վարձատրություն չեն հաշվարկել,որպես ոռոգման ջրի գանձում:

Գիտակցելով նաև որ նրանք հաղիսանում են ներկայիս Արմավիր> ՋՕԸ-ի աշխատակիցներ և նրանց ցածր հավաքագրման շնորհիվ ՋՕԸ-ն ներկայումս գտնվում ֆինանսական ծանր դրության մեջ ,ուստի ,գրավոր համաձայնվում են չդիմել խնդրի այլ տարբերակներով լուծմանը,

եթե <Արմավիր> ՋՕԸ-ն հաշվարկի և հնարավորության չափով սեղմ ժամկետում վճարի լրացուցիչ վարձատրություն գանձվող գումարներից:

Ներկայացնելով օրակարգի հարցը, մտքերի փոխանակումից հետո տեղի ունեցավ քվեարկություն,որի արդյունքում վարչական խորհուրդը միաձայն

Որոշեց.

1.Հանձնարարել <Արմավիր> ՋՕԸ-ի տնօրինությանը ըստ համայնքների կատարել բոլոր անհրաժեշտ հաշվարկները, սահմանված կարգով պահելով հարկերը:

2.Վերը նշված համայնքների ավագ ջրբաշխների հետ կազմել փոխադարձ համաձայնություն, որտեղ նշվի վճարվելիք գումարի չափը:

<Արմավիր> ՋՕԸ վարչական խորհրդի նախագահ Ս.Ասատրյան

<Արմավիր> ՋՕԸ վարչական խորհրդի քարտուղար Մ.Կոստանյան

Սույն արձանագրությունը կազմված է 26.10.2017թ. երեք օրինակից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«____» _____________ 2020թ
No ____________________

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ

Ի կատարումն 17.04.2020 թվականի № 02/05.5/16966-2020 հանձնարարականի

Հարգելի պարոն Աղաջանյան

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյանի կողմից ՀՀ կառավարությանն ուղղված հարցի վերաբերյալ ներկայացվում է պահանջվող տեղեկատվությունը, ինչպես նաև տեղեկատվության ստացման մեթոդաբանությունը:

Առդիր 1 ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Կատարող
Հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչություն
011 54 4060, 011 54 4088

**Ներկայացված մեթոդաբանությամբ առանձնացված ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարողների վերաբերյալ ամփոփ տվյալներ**

դրամ

| Ոլորտ | 2020 թվականին ընդհանուր հարկման համակարգ ընտրած հակ վճարողների քանակ | 2020 թվականին Շրջանառության հարկով հարկման համակարգ ընտրած հարկ վճարողների քանակ | Ռոյալթի վճարող | Հարկային մարմին վճարված հարկեր տուրքեր, վճարներ (մարված գումարներ) 2019թ. | Հարկային մարմին վճարված հարկեր տուրքեր, վճարներ (մարված գումարներ) 2020թ հունվար-մարտ | Շահութահարկի կանխավճար (2020թ 1-ին եռամսյակ) | Ռոյալթիի կանխավճար (2020թ 1-ին եռամսյակ) | Հարկային պարտավորությունների գումար 01.04.2020 դրությամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գունավոր մետաղների հանքաքարերի արդյունահանում (բացառությամբ ոսկու հանքաքարի) | 12 | | 6 | 63,925,139,420 | 10,974,966,989 | 2,380,848,360 | 6,097,260,066 | 5,867,595,515 |
| Երկաթի հանքաքարի արդյունահանում | 1 | | | 4,180,476 | 912,744 | - | | - |
| Զբոսաշրջային ծառայություններ | 153 | 404 | | 4,785,377,550 | 965,979,832 | 95,850,527 | | 118,125,038 |
| Զվարճությունների և հանգստի կազմակերպում | 41 | 108 | | 874,979,083 | 272,562,015 | 11,282,539 | | 30,756,091 |
| Հանրային սննդի կազմակերպում | 135 | 2013 | | 12,561,011,989 | 3,589,939,549 | 4,697,809 | | 950,316,926 |
| Հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ | 155 | 332 | | 7,656,481,213 | 1,427,763,743 | 74,792,016 | - | 695,576,902 |
| Մանրածախ առևտուր (բացառությամբ սննդամթերքի և դեղորայքի) | 2236 | 17169 | | 97,122,257,090 | 26,362,311,318 | 1,769,410,874 | - | 4,742,537,434 |
| Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների ծառայություններ | 37 | 336 | | 484,428,827 | 96,695,374 | - | | 28,692,311 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **2770** | **20362** | **6** | **187,413,855,648** | **43,691,131,564** | **4,336,882,125** | **6,097,260,066** | **12,433,600,217** |

| հ/հ | Ոլորտ | Դասակարգիչ |
|---|---|---|
| 1 | Հանրային սննդի կազմակերպում | **I56** Հանրային սննդի կազմակերպում՝ |
| 2 | Մանրածախ առևտրի ծառայություններ (բացառությամբ սննդամթերքի և դեղորայքի) | **G47 (բացառությամբ՝ G47.11, G47.2, G47.73, G47.81)** կամ<br>G45.11.2 կամ<br>G45.11.4 կամ<br>G45.19.2 կամ<br>G45.32 կամ<br>G45.40.2 կամ<br>G45.40.4 |
| 3 | Մետաղական հանքաքարի արդյունահանում, որից | **B07** |
| 3.1 | Երկաթի հանքաքարի արդյունահանում | **B07.10.0** Երկաթի հանքաքարի արդյունահանում |
| 3.2 | Գունավոր մետաղների հանքաքարերի արդյունահանում(բացառությամբ ոսկու հանքաքարի) | **B07.2, B07.29 (բացառությամբ B07.29.4)** գունավոր մետաղների հանքաքարի արդյունահանում, այլ գունավոր մետաղների հանքաքարերի արդյունահանում |
| 4 | Զբոսաշրջային ծառայություններ | **N79** Զբոսաշրջային գործակալությունների, զբոսաշրջային օպերատորների գործունեություն, տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ |
| 5 | Հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ | **I55** Կացության կազմակերպում |
| 6 | Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների ծառայություններ | **S96.02** Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների այլ ծառայություններ |
| 7 | Զվարճությունների և հանգստի կազմակերպում | **R93.2** Զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն |

**Մեթոդաբանություն՝**

**1) Գործունեության ոլորտի որոշման համար հիմք է ընդունվել 2020 թվականի ապրիլի 1-ի դրությամբ հայտարարագրված գործունեության դասակարգիչը: Ընդ որում եթե հարկ վճարողը հայտարարագրել է մի քանի ոլորտ, ապա հիմք է ընդունվել 40 տոկոս և ավելի տեսակարար կշիռ ունեցող ոլորտը: Ընտրված գործունեության ոլորտի տեսակների դասակարգիչները նշված են աղյուսակում:**

**2) Հարկ վճարողների քանակը հաշվարկելիս հաշվի են առնվել 2019 թվականի ընթացքում կամ 2020 թվականի հունվար-մարտ ամիսներին 1 դրամ և ավել վճարում կատարած և միասնական հաշվից մարված գումարներ ունեցող հարկ վճարողները (դիտարկվել են որպես «գործող»)**

**3) Հարկման համակարգը որոշելու համար հիմք է ընդունվել 2020 թվականին հարկ վճարողների կողմից ներկայացված հայտարարությունները, ինչպես նաև համակարգի կողմից վերջիններիս հաշվառված լինելը**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«____» ______________ 2020թ.

No ____________________

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ՊԱՐՈՆ ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մելքումյան

Ի պատասխան Ձեր՝ սնանկության դիմումների թվաքանակի վերաբերյալ գրավոր հարցի, հայտնում ենք, որ ՀՀ Պետական եկամուտների Կոմիտեի կողմից 2019թ. ընթացքում ՀՀ սնանկության դատարան է ներկայացվել թվով 519 սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումներ, որոնցից

194 դիմումները՝ 1-ից 3 մլն ՀՀ դրամ պարտավորություն ունեցող պարտապանների նկատմամբ,

100 դիմումները՝ 3-ից 5 մլն ՀՀ դրամ պարտավորություն ունեցող պարտապանների նկատմամբ,

89 դիմումները՝ 5-ից 10 մլն ՀՀ դրամ պարտավորություն ունեցող պարտապանների նկատմամբ,

67 դիմումները՝ 10-ից 20 մլն ՀՀ դրամ պարտավորություն ունեցող պարտապանների նկատմամբ,

40 դիմումները՝ 20-ից 50 մլն ՀՀ դրամ պարտավորություն ունեցող պարտապանների նկատմամբ,

29 դիմումները՝ 50 մլն ՀՀ դրամ և ավելի պարտավորություն ունեցող պարտապանների նկատմամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X ______________________________

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Կատարող՝ իրավաբանական վարչության
Սնանկության գործերի բաժին,
Քնարիկ Քյարունց
Հեռ. (011) 549191 (91-83)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«____» ______________ 2020թ.

No ____________________

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ՊԱՐՈՆ ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մելքումյան

Ի պատասխան Ձեր՝ սնանկության դիմումների թվաքանակի վերաբերյալ գրավոր հարցի, հայտնում ենք, որ ՀՀ Պետական եկամուտների Կոմիտեի կողմից 2019թ. ընթացքում ՀՀ սնանկության դատարան է ներկայացվել թվով 519 սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումներ, որոնցից

194 դիմումները՝ 1-ից 3 մլն ՀՀ դրամ պարտավորություն ունեցող պարտապանների նկատմամբ,

100 դիմումները՝ 3-ից 5 մլն ՀՀ դրամ պարտավորություն ունեցող պարտապանների նկատմամբ,

89 դիմումները՝ 5-ից 10 մլն ՀՀ դրամ պարտավորություն ունեցող պարտապանների նկատմամբ,

67 դիմումները՝ 10-ից 20 մլն ՀՀ դրամ պարտավորություն ունեցող պարտապանների նկատմամբ,

40 դիմումները՝ 20-ից 50 մլն ՀՀ դրամ պարտավորություն ունեցող պարտապանների նկատմամբ,

29 դիմումները՝ 50 մլն ՀՀ դրամ և ավելի պարտավորություն ունեցող պարտապանների նկատմամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X ______________________

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Կատարող՝ իրավաբանական վարչության
Սնանկության գործերի բաժին,
Քնարիկ Քյարունց
Հեռ. (011) 549191 (91-83)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
**МИНИСТР**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
**MINISTER**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, minister@escs.am, www.escs.am

N------------------------- «--------» --------------------2020թ.

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

**ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Մելքումյան,

2020 թվականի մարտի 19-ին Ձեր կողմից ՀՀ կառավարությանն ուղղված գրավոր հարցի կապակցությամբ, որը ՀՀ վարչապետի աշխատակազմից 2020 թվականի մարտի 27-ի N 02/05.5/11456-2020 հանձնարարականով վերահասցեագրվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, հայտնում եմ, որ բարձրացված հարցն ընդգրկված է նախարարության օրակարգում, սակայն դրա վերաբերյալ քննարկումներն առաջարկում եմ կազմակերպել արտակարգ դրության ավարտից հետո:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

X ______________________

Կատ.՝ Տ. Գալստյան
հեռ.՝ (010) 599619
(093) 102626

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
**МИНИСТР**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
**MINISTER**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, minister@escs.am, www.escs.am

N------------------------ «--------» --------------------2020թ.

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**
**ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Մելքումյան,

Ի կատարումն ՀՀ վարչապետի՝ 2020 թվականի ապրիլի 23-ի N 02/05.5/18161-2020 հանձնարարականի և 2020 թվականի մարտի 30-ին ՀՀ կառավարությանն ուղղված Ձեր գրավոր հարցին ի պատասխան՝ տրամադրում եմ անհրաժեշտ տեղեկատվությունը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող դասվարների վերաբերյալ:

Առդիր՝ 1 էջ:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

X ______________________

Կատ.՝ Տ. Գալստյան
հեռ.՝ (010) 599619
(093) 102626

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԴԱՍՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | | |
|---|---|---|
| **N 1** | Հայաստանի Հանրապետությունում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող դասվարների ընդհանուր թվաքանակը | **6373** |
| **N 2** | Հայաստանի Հանրապետությունում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող և հավելավճար ստացող դասվարների ընդհանուր թվաքանակը | **6263** |
| **N 3** | Հայաստանի Հանրապետությունում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող դասվարների ամսական միջին հավելավճարի չափը | **17441 (ՀՀ դրամ)** |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐ**

« » ____________ 2020 թ. N____________

**Վարչապետի 08.04.2020 թ.**
**թիվ 02/05.1/13832-2020 հանձնարարականի**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ՊԱՐՈՆ Տ. ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Գալստյան,**

Ի պատասխան ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյանի ՀՀ կառավարությանն ուղղված գրավոր հարցերի՝ տրամադրում եմ պետական աջակցության այն հաշիվների թվի վերաբերյալ տեղեկությունը, որոնցից նախորդ երեք տարիների ընթացքում ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի՝ բանկ ներկայացրած հանձնարարականի հիման վրա կատարվել են պարբերական կամ միանվագ վճարումներ՝ ցանկացած բանկային հաշվի փոխանցելու միջոցով:

Միաժամանակ հայտնում եմ, որ 01.01.2020 թ. դրությամբ 12978 անձ ունեցել է մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ ստանալու իրավունք:

Տեղեկացնում եմ նաև, որ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մինչև երկու տարեկան երեխա ունեցող, 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ առնվազն մեկ տարի ՀՀ բնակության վայրի հասցեով հաշվառված, չաշխատող ծնողների թվի վերաբերյալ տեղեկատվությանը չի տիրապետում:

Առդիր՝ 1 ֆայլ:

Invalid signature

X

ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆ

Signed by: BATOYAN ZARUHI 7909790279

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **Զ. ԲԱԹՈՅԱՆ**

Կատ.՝ կենսաթոշակային ապահովության վարչություն
010 54 27 96

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

# Տեղեկատվություն

այլ բանկային հաշվի փոխանցելու միջոցով (ամսական 50000 դրամից ոչ ավելի) կատարված պարբերական կամ միանվագ վճարումների վերաբերյալ

| Տարեթիվը | Դիմումների թիվը, որոնց հիման վրա պարբերական կամ միանվագ վճարումներ են կատարվել | Կանխիկացված գումարի չափը (դրամ) |
|---|---|---|
| 2017 | 13,394 | 2,950,317,227 |
| 2018 | 22,266 | 4,225,964,053 |
| 2019 | 28,990 | 9,026,610,158 |
| **Ընդամենը** | **64,650** | **16,202,891,437** |

պարզաբանել

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐ**

« »____________ 2020 թ. N____________

**Վարչապետի 08.04.2020 թ.**
**թիվ 02/05.1/13832-2020 հանձնարարականի**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ՊԱՐՈՆ Տ. ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Գալստյան,**

Ի պատասխան ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյանի ՀՀ կառավարությանն ուղղված գրավոր հարցերի՝ տրամադրում եմ պետական աջակցության այն հաշիվների թվի վերաբերյալ տեղեկությունը, որոնցից նախորդ երեք տարիների ընթացքում ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի՝ բանկ ներկայացրած հանձնարարականի հիման վրա կատարվել են պարբերական կամ միանվագ վճարումներ՝ ցանկացած բանկային հաշվի փոխանցելու միջոցով:

Միաժամանակ հայտնում եմ, որ 01.01.2020 թ. դրությամբ 12978 անձ ունեցել է մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ ստանալու իրավունք:

Տեղեկացնում եմ նաև, որ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մինչև երկու տարեկան երեխա ունեցող, 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ առնվազն մեկ տարի ՀՀ բնակության վայրի հասցեով հաշվառված, չաշխատող ծնողների թվի վերաբերյալ տեղեկատվությանը չի տիրապետում:

Առդիր՝ 1 ֆայլ:

Invalid signature

X

ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆ

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** Signed by: BATOYAN ZARUHI 7909790279 **Զ. ԲԱԹՈՅԱՆ**

Կատ.՝ կենսաթոշակային ապահովության վարչություն
010 54 27 96

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

# Տեղեկատվություն

այլ բանկային հաշվի փոխանցելու միջոցով (ամսական 50000 դրամից ոչ ավելի) կատարված պարբերական կամ միանվագ վճարումների վերաբերյալ

| Տարեթիվը | Դիմումների թիվը, որոնց հիման վրա պարբերական կամ միանվագ վճարումներ են կատարվել | Կանխիկացված գումարի չափը (դրամ) |
|---|---|---|
| 2017 | 13,394 | 2,950,317,227 |
| 2018 | 22,266 | 4,225,964,053 |
| 2019 | 28,990 | 9,026,610,158 |
| **Ընդամենը** | **64,650** | **16,202,891,437** |

**ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆԿԱՌԱՎԱՐՄԱՆԵՎԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻՆԱԽԱՐԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"......." ...................... 2020թ. N...............................

ՀՀ ԱԺ պատգամավոր
Մ. Մելքումյանին

*Ի կատարումն ՀՀ վարչապետի 30.03.2020թ.*
*թիվ02/05.7/12207-2020հանձնարարականի*

Հարգելի պարոն Մելքումյան

Ի պատասխան ՀՀ վարչապետին ուղղված Ձեր գրությանը՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ մարզպետարաններից բնակիչները հիմնականում պահանջում են աշխարհագրական անվանումների (բնակավայրերի և այլն) փոփոխությունների, տվյալ բնակավայրի՝ սահմանամերձ լինելու փաստը հավաստելու, աշխատանքային ստաժի (հիմնականում ՌԴ-ից) հետ կապված տվյալների ճշգրտման, մարզի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող առանձին ցուցանիշների վերաբերյալ (հիմնականում ուսանողների և դիսերտանտների կողմից) և այլբնույթի ու բովանդակության տեղեկանքներ:

ՀՀ մարզերի բնակիչներին, ըստ հարցման, տրվում են հետևյալ տեղեկանքները.

- Ընտանիքների անապահովության համակարգում հաշվառման և անապահովության միավորների վերաբերյալ

- Ուսանողներին՝ ծնողի /ծնողների/ մարզի բարձրլեռնային բնակավայրերի դպրոցներում աշխատելու վերաբերյալ

- ՀՀ մարզպետարանի նախկին աշխատողներին՝ մարզպետարանում աշխատելու և այլ փաստաթղթերի վերաբերյալ:

Հարցումների միասնական հարթակի (www.e-reguest.am) միջոցով դիմած քաղաքացիների կողմից պահանջվող համապատասխան տեղեկատվություն

(բացառությամբ այն տեղեկատվությունների, որոնց տրամադրումը սահմանափակված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով) պարունակող տեղեկանքները տրամադրվում են նրանց կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեով:

X

Հարգանքով՝

Ս. Պապիկյան

*Կատարող՝ Մարինե Վարդանյան*
*Տարածքային կառավարման վարչություն*
*Հեռ. /011/524632*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«____» ______________ 20 թ.

No ____________________

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՊԱՐՈՆ ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 26.02.2020թ.-ի թիվ ԱԺՀ.11/1604-2020 գրության

Հարգելի պարոն Մելքումյան

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ /ուժը կորցրել է 01.01.2018թ./ և ՀՀ հարկային օրենսգրքի 430-րդ հոդվածների 2017-2020 թվականների ընթացքում հարկային պարտավորության չափը 500 հազար դրամ կամ ավելի կազմելու դեպքում թվով 9813 հարկ վճարողների գույքի վրա կիրառվել են արգելանքներ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականից հարկ վճարողների համար ստեղծելով առավել բարենպաստ պայմաններ, չկատարած հարկային պարտավորությունները գանձելու մասին որոշման մեջ նշում է կատարում, որով հարկ վճարողներին առաջարկում է որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դիմել հարկային մարմին հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացնելով և եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Հիմք ընդունելով հարկ վճարողների արգելանք չկիրառելու վերաբերյալ դիմումները և հաշվի առնելով ներկայացրած հիմնավոր ապացույցները թվով 12 հարկ վճարողների գույքի նկատմամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից արգելադրման աշխատանքներ չեն իրականացվել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X ______________________

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Կատարող՝ ԻՎ ՀԳ և ՊԿԱ բաժին,
գլխավոր մասնագետ
Մ. Բաղդասարյան
հեռ.011 549191 /91-68/